1890-ԱԿԱՆ ԹԹ. ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ «ՄՈՒՐՃ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒՄ

ՔՈՍՅԱՆ Լ. Ս.

Օսմանյան կայսրությունը XIX դ. երկրորդ կեսին շարունակում էր դաժան քաղաքականություն վարել իր հպատակ ժողովուրդների և հատկապես հայ ժողովրդի նկատմամբ: Վերջինիս հանդեպ գործադրվող բռնությունների քաղաքականությունը սուր բնույթ կրեց հատկապես Աբդուլ Համիդ II-ի (1876-1908 թթ.) օրոք: Աբդուլ Համիդը ցանկանում էր Օսմանյան կայսրության շուրջ համախմբել ամբողջ մահմեդական աշխարհը, որի իրագործման ճանապարհին հայերը լուրջ խոչընդոտ էին՝ իրենց ազգային-ազատագրական գաղափարներով, ուստի Հայկական հարցի լուծումը տեսնում էր հայ ժողովրդի բնաջնջման մեջ:

Զանգվածային կոտորածները սկիզբ առան 1890-ական թթ. սկզբին և իրենց գագաթնակետին հասան 1894-1896 թթ.: Դա թուրքական իշխանությունների կողմից հայ ժողովրդի հանդեպ գործադրված ցեղասպանության քաղաքականության առաջին փորձն էր:

1890-ական թթ. իրադարձությունների մասին փաստական զգա- լի նյութ է պարունակում ժամանակի հայ մամուլը, ներառյալ՝ « Մուրճ» ամսագիրը: Այն հրատարակվել է Թիֆլիսում Ավետիք Արասխանյանի ջանքերով: Արևմտահայերի ճակատագրի նկատմամբ «Մուրճ» ամսագիրը սկիզբից ևեթ հանդես բերեց սրտացավ մոտեցում: Ա. Արասխանյանը որդեգրեց «նրանց ճակատագիրը նաև մերն է սկզբունքը»: Եվ խմբագիրը խոստանում է ընթերցողներին «ամեն ամիս հաշիվ տալ Տաճկա-Հայաստանի ընթացիկ կյանքի դեպքերից»[1]: Պարբերականում տպագրվել են հոդվածներ, որոնք լուսաբանել են 1890-ական թթ. հայերի նկատմամբ իրականացված զանգվածային կոտորածները, հայ գաղթականության անասելի ծանր դրությունը, մեծ տերությունների դիրքորոշումը և այլն: Հասկանալի է, որ տպագրվել են ոչ բոլոր հաղորդագրությունները, քանի որ ռուսական իշխանությունները պարբերականները ենթարկել են խստագույն գրաքննության: Այնուամենայնիվ, ժամանակի պարբերական մամուլը որոշ դեպքերում միակ աղբյուրն է այս կամ այն իրադարձության վերաբերյալ:

Հարկ է նշել, որ խնդրո առարկա ժամանակաշրջանի հետ առընչվող հաղորդագրությունները ստացվում են բավական ուշ՝ կապված տեղեկատվության ստացման դժվարությունների հետ:

Առաջին խոշոր ջարդերը տեղի ունեցան Սասունում 1894 թ.: «Մուրճ»-ում տպագրված «Սասնոյ դէպքերը» հոդվածում խմբագիրը, մատնանշելով Սասունի անառիկ դիրքը և տեղի ազատատենչ հայությանը, ընդգծել է, որ այն իր հերոսական պայքարով միշտ «վտանգ» է եղել Օսմանյան կայսրության համար: Վերջինս երկյուղում էր, որ ընդվզումների դեպքում սասունցիներին կհետևի նաև

---

[1] *Մուրճ, Թիֆլիս, 1889, N 12, էջ 1888-1889:*

Արևմտյան Հայաստանի հայության զգալի մասը, ուստի անհրաժեշտ է համարում, որ «ապստամբությունը խեղդվի դեռ իր օրորոցի մէջ»[2]: Իշխանությունները որոշում են նախահարձակ լինել և հանկարծակի հարձակումով ջախջախել հայերին: Այդ իսկ պատճառով կառավարությունը հրահանգում է Օսմանյան կայսրության զինված ուժերի զգալի մասն ուղղել Սասուն: Քրդական ցեղերին հրաման տրվեց անհապաղ հարձակվել Սասունի վրա: Նրանց հետևում են կանոնավոր զորքերը, որոնք բանակում էին Մուշում: « Մուրճի» ունեցած տեղեկության համաձայն՝ Սասունի դեմ ուղղվում է մոտ 43 հազար զինվոր, որը, կարծում ենք, չափազանցված է: Հավանաբար նշված թվի մեջ են մտել քրդական զինված ջոկատներին « ուղեկցող» իրենց իսկ ցեղախմբերը՝ բաշիբոզուկները, որոնք գալիս էին հայկական բնակավայրերը կողոպտելու համար: Իրենց հերթին սասունցիները դիմում են նախազգուշական քայլերի:

Աղյուսակ 1

«Մուրճ» պարբերականը Սասունի հայկական ուժերի թվի մասին

Բնակավայրեր	Մարտիկների քանակը
Տալվորիկ	304
Գելիեգուզան	741
Շենիկ	208
Սեմալ	160
Իշխանձոր	180
Հեթինք	34
Աղբի	120
Ալի	208
Ընդամենը	1955[3]

Թուրք-քրդական ուժերը 1894 թ. օգոստոսի 3-ին հարձակվեցին Տալվորիկի, Իշխանձորի, Աղբիի և Անդոկի վրա: Սասունցիները դիմադրություն կազմակերպելու համար որոշում են կենտրոնանալ աշխարհագրական հարմար դիրք ունեցող Անդոկում: Կատաղի և անհավասար կռվում ընկնում է երկու հարյուր սասունցի[4]: Սասունցիների համառ դիմադրությունը և հակառակորդի կորուստները պատճառ են դառնում, որ քրդերը թուրքական հրամանատարությունից պահանջեն բանակցություն՝ ցանկանալով վերջ տալ կռվին:

Թուրքական VI բանակի հրամանատար Զեքի փաշան իր ուժերը կենտրոնացնում է Անդոկի ստորոտում և սասունցիներից պահանջում վերջ տալ կռվին ու առաջարկում է բանակցել: Ռազմամթերքի և հացի պաշարների պակասությունը ինքնապաշտպաններին ստիպում է համաձայնել, և 184 մարտիկներ գնում են բանակցելու[5]: Ինչպես բոլոր նման դեպքերում, այս անգամ ևս թուրք հրամանա-

---

[2] *Մուրճ, 1894, N 10, էջ 1497:*

[3] *Նույն տեղում, էջ 1498:*

[4] **Պողոսյան Հ. Մ.,** *Սասունի պատմություն, Ե., 1985, էջ 201:*

[5] *Մուրճ, 1894, N 10, էջ 1501:*

տարությունը դավադրաբար կոտորեց սասունցիներին: Այնուհետև թուրք ու քուրդ միացյալ ուժերը հարձակվում են իշխան Գրգոյի մարտիկների վրա, որոնք կարողանում են դիմադրել մի քանի օր: Տեսնելով, որ արդեն սովամահ են լինում, Գրգոն Անդոկի պաշտպանությունը հանձնում է իրենց քաջությամբ հայտնի սասունցի կանանց, և իրենք իջնում են Խուլփ ու Խիանք գավառներ՝ պարեն բերելու: Անդոկը 1894 թ. օգոստոսի 23-ին պաշարվում է, տեղի են ունենում կատաղի ու անզիջում կռիվներ: Վեցօրյա մարտից հետո, վերջ ի վերջո, սասունցիները տեղի են տալիս և քաշվում դեպի Կեփիկ: Անդոկը գրավվում է: Ողջ մնացածները թրատվում են անխնա, մանուկների դիակները ճոճվում են նիզակների վրա, կանանց անպատվում են: « Գրգոյի հարսը՝ Շաքէ, կուի մէջ հերոսուհի մը հանդիսացած, կը կայնի բարձր քարաժայռի մը վրայ և կըսկսի բարձրաձայն գոչել. « Սասունցի կանայք, ձեզ կը մնայ արդ որոշել, թէ լաւ կը գերի գնալ քիւրդերին, ընդունել Մուհամմէդի պիղծ օրէնքը, թէ ուրանալ մեր անեղծ սրբութիւնը ի պարսաւանս ամբողջ Հայութեան», թե…կը հետևիք իմ օրինակին»[6]: Եվ նա իր երեխային գրկած նետվում է բարձր քարաժայռից, որին հետևում են շատերը: Վերջինները, ընկնելով իրենց քույրերի դիակների վրա, ողջ են մնում:

Թուրքական բանակը և քրդական ջոկատները դաժան հաշվեհարդար տեսան սասունցիների հետ՝ կողոպտելով ու ավերելով գյուղերը, կոտորելով բնակչության մի մասին: Ինչպես հաղորդում է « Մուրճի» թղթակից գնդապետ Հակոբ Դավթյան-Լազարյանը, որն իր տեղեկությունները հավաքել է սասունցի ականատեսից, կողոպտվել է 74 մեծ և փոքր գյուղ: Միայն տղամարդկանցից սպանվում է 12.850 հոգի[7]: Այս ոճրագործությունը կատարելուց հետո թուրքական կառավարությունը ողջ մեղքը բարդեց քրդերի վրա, պնդելով, որ նախահարձակը եղել են քրդերը, և թուրքական բանակը ստիպված է եղել միայն միջամտել՝ կանխելու համար երկու հարևան ժողովուրդների միջև սկսված արյունահեղությունը:

Աբդուլ Համիդի որդեգրած հայաջինջ քաղաքականության առաջին կազմակերպված դրսևորումը՝ 1894 թ. Սասունի ջարդերը, անարձագանք չմնաց: Սասունի կոտորածից հետո նորից արթնացավ Հայկական խնդիրը, բայց այնպիսի ուժգնությամբ, որ «նույնիսկ Բեռլինի կոնգրեսի ժամանակ հայկական խնդիրն այդպիսի արձագանք չէր գտել»[8]: Առաջավոր մարդկության բազմաթիվ ներկայացուցիչներ իրենց բողոքի ձայնը բարձրացրին աբդուլհամիդյան ջարդարար քաղաքականության դեմ: Սկսվեց ցույցերի և բողոքների մի մեծ ալիք: Նրանք մեծ տերություններից պահանջում էին միջամտություն՝ կանխելու սուլթանի կամայականությունները: Մեծ տերությունների Կ. Պոլսի դեսպանները թուրքական կառավարությունից պահանջեցին քննիչ հանձնաժողով ուղարկել Սասուն: 1895 թ. հունվարին Սասուն ժամանեց հայկական ջարդերի պատճառներն ու

---

[6] Նույն տեղում, էջ 1502-1503:

[7] Մուրճ, 1895, N 1, էջ 158:

[8] Նույն տեղում, էջ 125:

հանգամանքները քննող կառավարական հանձնաժողով, որի կազմում, որպես դիտորդներ մասնակցում էին Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի ներկայացուցիչները[9]: Թուրքական կառավարությունն ամեն միջոցի դիմում էր խաթարելու Սասունի կոտորա-ծի քննությունը: Արգելվեց օտար տերությունների թղթակիցների մուտքն Արևմտյան Հայաստան: Այդպես սուլթանն ուզում էր խեղդել յուրաքանչյուր անաչառ արձագանք Սասունի կոտորածների մասին[10]: Հայ, քուրդ և թուրք վկաների ցուցմունքների հիման վրա, ըստ բրիտանական տեղեկատվության եզրակացության, կոտորածների հեղինակները ոչ թե քրդերն են, այլ թուրքական կառավարությունն է[11]: Սասունի կոտորածի քննությունն առաջադեմ մարդկության առջև բացեց Օսմանյան կայսրության կազմած մի դիվային նախագիծ: Սակայն Սասունի կոտորածն այդ նախագծի միմիայն մի մասն էր[12]:

Կ. Պոլսի մեծ տերությունների դեսպանները կազմեցին բարենորոգումների ծրագիրը (1895 թ., մայիս), որի հիմքը Բեռլինի 61-րդ հոդվածն էր: Սասունի դեպքերի քննությունից հետո մայիսյան բարենորոգումների ծրագիրը պետք է հանձնվեր սուլթանին: Մեծ տերությունների կողմից այս « մեծահոգությունը» դարձյալ բխում էր իրենց քաղաքական շահերից: Նրանք հարմար առիթը բաց չէին թողնում խառնվելու Օսմանյան կայսրության ներքին գործերին, իսկ Հայկական հարցը և հայերի զանգվածային կոտորածը ամենապատեհ առիթն էին կախվածության մեջ դնելու Օսմանյան կայսրությանը: Մայիսյան բա-րենորոգումների ծրագիրն արժանացավ Բեռլինի 61-րդ հոդվածի ճա-կատագրին՝ մնալով թղթի վրա:

Ուստի հայությանը չէր մնում ոչինչ, քան բողոքի ձայն բարձրացնել: Նրանք ընտրեցին խաղաղ ցույցի ճանապարհը՝ փորձելով այս ճանապարհով սուլթանին հիշեցնել բարենորոգումների մասին: Ինչպես « Մուրճի» թղթակից Ստ. Խաչ-Պապյանն է հաղորդում, ցույցի ժամանակ տեղի ունեցած ընդհարման ընթացքում սպանվում են մի քանի ոստիկաններ, այդ թվում՝ նաև սպաներ: Հայերից զոհվում է շուրջ 40 հոգի[13], ապա հետևում են ձերբակալություններ և խուզարկություններ: Փողոցներում շրջում էին զինվորներն ու ոստիկանները, որոնք խուզարկում էին հայերին և չնչին պատրվակով ձերբակալում: 1895 թ. սեպտեմբերի 18-ի գիշերը մահմեդական խաժամուժը հարձակվում է Կետիկ փաշա և Գում-Գափու թաղերի հայ բնակչության վրա: Տեղի է ունենում կոտորած, շատերին ձերբակալում են առանց որևէ պատճառի՝ «մեկ օրուան մէջ 2000 հոգի ձերբակալուած են»: Կալանվածները ենթարկվում են կտտանքների: Ստ. Խաչ-Պապյանը վկայում է, որ «իր 15 ընկերները չարաչար ծեծելով՝ կը ջախջախեն բոլորին ալ գլուխները՝ ուղեղները դուրս

[9] Նույն տեղում, N 6, էջ 824:

[10] Նույն տեղում, N 1, էջ 133:

[11] Հանձնաժողովի նիստերի վկայությունների մասին մանրամասն տե՛ս Մուրճ, 1895, N 3-4, էջ 476-549:

[12] Մուրճ, 1895, N 6, էջ 826-827:

[13] Նույն տեղում, N 9-10, էջ 1307:

թափելով: Բանտին մէջի մեռելներուն արիւնը ծածկելու համար 7 սայլ կիր տարուած է բանտը»[14]:

«Մուրճն» իր էջերում ներկայացնում է նաև եվրոպական մամուլի արձագանքներն ու հաղորդումները: Այսպես, սեպտեմբերի 21-ին «Ստանդարտ» անգլիական լրագրի հատուկ թղթակիցը հեռագրում է. «Խառնակութիւնները Ստամբոլի մէջ նորոգուեցին. կրկին ընդհարումներ եղան ոստիկանութեան հետ, որոնց հետևանքը եղան ոչ քիչ սպանուածներ: Անկարգութիւնների շնորհիւ բոլոր խանութները փակուած են, փողոցներում շրջում են զօրականներ, և քաղաքը իրապէս պաշարման դրութեան մէջ է»[15]:

Մինչ տերությունները հայերի վիճակը բարելավելու վերաբերյալ բարենորոգման ծրագիր են ներկայացնում Աբդուլ Համիդին, վերջինս շարունակում է իր սկսած գործը՝ փորձելով ավարտին հասցնել և վերջնականապես լուծել Հայկական հարցը:

Կ. Պոլսի հայկական մեծ ցույցից անմիջապես հետո Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում սկսվում են անզեն հայերի զանգվածային կոտորածները. « Պոլսէն մինչև Տրապիզոն, Կարինէն մինչև Մարաշ և Սեբաստիա, կոտորածը, մեծ հրդեհու պէս, ծաւալեցաւ ճարակեցաւ բոլոր Տաճկահայաստանի և Կիլիկիայի նահանգները: Թիւրքի սուրը խտիր չի դներ սեռի և տարիքի մէջ. երեխան իր մօրը գիրկը կը խողխողուի. մայրը իր զաւակի առջև կը մորթի, զաւակը իր հօրը ներկայութեանը կը յօշոտուի»[16]:

Տրապիզոնում 1895 թ. սեպտեմբերի 26-ին զանգվածային կոտորածների սկիզբը դրվեց: «Մուրճ»-ն իր «Հայերի կոտորածները Տաճկաստանում» հոդվածում, հայտնում է ջարդերի մանրամասներից: Կոտորածը տևեց երկու ժամ, որին հետևել է հայերի ունեցվածքի կողոպուտը[17]: Կոտորածն անողորմ էր. փողոցներում եղած հայերը, որոնք չէին սպասում մի այդպիսի արհավիրքի, խելակորույս փախչում էին, բայց բոլորին չէր, որ հաջողվում էր փրկվել, քանի որ ջարդարարների խմբերը գալիս էին քաղաքի տարբեր մասերից: Ոմանց հաջողվեց ապաստանել ֆրանսիական ուսումնարանում: Տրապիզոնի կոտորածը և ավերումը տարածվեցին նրա շրջակա հայկական գյուղերի վրա:

1895 թ. հոկտեմբերի 7-ին հայերի կոտորածը սկսվում է Դերջանի գավառում: Հիմնականում կենդանի են մնում այն հայերը, ովքեր համաձայնում են կրոնափոխ լինել[18]: Երկու օր անց՝ 1895 թ. հոկտեմբերի 9-ին, կոտորածներ են սկսվում Երզնկայում. առիթը հայերի կողմից Կիրիլ Խոջա անունով մի թուրքի սպանությունն էր, որը «մահմէդականների մէջ վայելում էր մեծ յարգանք: Այդ սպանութիւնը նշան եղաւ նոր գազանութիւնների»[19]: Կոտորածը Երզնկայում

[14] Նույն տեղում, էջ 1311:

[15] Նույն տեղում, էջ 1308-1313:

[16] Նույն տեղում, N 11, էջ 1516:

[17] Նույն տեղում, էջ 1495:

[18] Հայոց պատմություն, հատոր III, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես – 1918 թ.), գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), Ե., 2010, էջ 530:

[19] Մուրճ, 1895, N 11, էջ 1500:

վերսկսվում է հոկտեմբեր 21-ին: Սպանվում է 260 հայ[20]:

Հոկտեմբերի 13-ին Բաբերդի հայության կոտորածի ազդանշան են տալիս թուրքական բանակի կանոնավոր ստորաբաժանումները: Մահմեդական խաժամուժը հարձակվում է բնակչության վրա, այրում դպրոցները, տները և գումերը. « Այրող շինութիւների մէջ եղածներից ով փորձում էր փախչել՝ ստանում էր հրացանի գնտակների հարուած: Բայց այն երիտասարդ տղամարդիկ և կանայք, որոնք ընկնում էին ավազակների ձեռքը, այրում էին և ցից հանում: Բազմաթիւ կանայք լլկուեցան և յետոյ սպանուեցան: Մոտ 150 հայ զոհուեցան»[21]: Հայերի մեծ մասին կոտորելուց հետո ելուզակները կողոպտում են բաբերդցիների ունեցվածքը: Ջարդերի ընթացքում հայերը դիմում են Բաբերդի կառավարչի օգնությանը, սակայն նա ուղարկում է միայն երեք ժանդարմ, որոնք տեղ են հասնում միմիայն ջարդերից հետո:

1895 թ. հոկտեմբերի 16-ին կոտորած է սկսվում Շապին Կարահիսարում, որտեղ չնայած հայերի հերոսական ինքնապաշտպանությանը, նրանք զգալի զոհեր են ունենում: Քաղաքում զոհվում են 2000-ից ավելի հայեր, իսկ շրջակա 30 գյուղերից՝ 3000 մարդ[22]:

Խարբերդի նահանգում և նրա 59 գյուղերում 1895 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 1896 թ. հունվարի 15-ի ժամանակահատվածում տեղի հայությունն ունեցել է հետևյալ կորուստները.

« Սպանուած քրիստոնեաների թիւը…….29.544
Այրուած քրիստոնեաների թիւը……1.383
Սպանուած ուսուցիչների, քարոզիչների և քահանաների թիւը……..51
Սովից և ցրտից մեռածների թիւը……3.266
Որոնք գտնվել են մեռած դաշտերում և ճանապարհներում……..4.330
Որոնք վախից են սրտաճաք եղել……..760
Ընդհանուր մեռածների գումարը…….....39.334
Վիրաւորուածներ……8.000
Այրուած տներ……28.562
Աւերուած եկեղեցիներ, վանքեր և դպրոցներ……...227
Անպատուած կանայք և աղջիկներ…….....5.530
Բռնի կերպով ամուսնացրած թիւրքերի հետ……1.532
Բռնի իսլամացրած……15.179[23]»:

Սուլթանի հայահալած քաղաքականությունը հարմար առիթ էր նաև մեծ տերություններին՝ միջամտելու կայսրության ներքին գործերին: Հայերի զանգվածային ջարդերը դադարեցնելու Կ. Պոլսի դեսպանությունների փորձը գլխավորում էր Ռուսաստանի դեսպան Ա. Նելիդովը: Նա նախազգուշացրեց սուլթանին, որ եթե չդադարեցնի կոտորածները, ինքը հրամայելու է ռուսական նավերին կրակել սուլթանի նստավայրի վրա: Դեսպանի վճռական խոսքը հարկադրեց սուլթանին դադարեցնել ջարդերը[24]:

---

[20] *Հայոց պատմություն, հ. III, էջ 530:*
[21] *Մուրճ, 1895, N 11, էջ 1499:*
[22] *Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, Ե., 1981, էջ 267-268:*
[23] *Մուրճ, 1896, N 2, էջ 296-297:*
[24] *Հայոց պատմություն, հ. III, էջ 538:*

1890-ական թթ. Աբդուլ Համիդի ձեռնարկած ջարդերն իրավամբ կարելի է համարել հայ ժողովրդի ցեղասպանության սկիզբ: Այդ ժամանակաշրջանում կային գործոններ, որոնք ավելի էին հեշտացնում սուլթանի ծրագրի իրագործումը: Նախ մեծ տերությունների շահադիտական քաղաքականությունը, որը թույլ էր տալիս սուլթանին իրականացնել իր դիվային ծրագիրը: Համոզված ենք, եթե սուլթանը փոքր-ինչ կասկած ունենար, որ մեծ տերությունների առաջ քաշած բարենորոգումների ծրագիրը ստեղծված չէ միմիայն հայության աչքերը փակելու համար, երբեք չէր շարունակի իր հայաջինջ քաղաքականությունը: Իր հերթին զգուշավոր բռնակալը դրդում էր քրդերին հարձակվել հայերի վրա՝ նպատակ ունենալով.

1) խորացնել թշնամանքը երկու ժողովուրդների միջև.

2) հայերի ունեցվածքի կողոպուտով « կաշառել» քրդերին և նրանց զերծ պահել եվրոպական տերությունների ազդեցությունից և հնարավոր հակակառավարական ելույթներից.

3) կոտորածների մեջ ամբաստանել «վայրի» քրդերին և այսպիսով քողարկել կառավարության՝ զանգվածային սպանություններին մասնակցության փաստը:

Աբդուլհամիդյան ջարդարար քաղաքականությանը զոհ գնացին 300.000 հայեր, ամբողջովին կամ կիսով չափ կողոպտվեցին ու քարուքանդ եղան 3000-ից ավելի հայկական գյուղեր[25], շատերն էլ բռնեցին գաղթի ճանապարհը:

Փաստորեն Աբդուլ Համիդը որոշեց Հայկական հարցը լուծել վերջնականապես՝ այսինքն Արևմտյան Հայաստանը մաքրելով հայերից՝ թե՛ կոտորելու, թե՛ կողոպտելու, թե՛ գաղթի միջոցով: Սուլթանական կառավարությունն ամեն ինչի պատրաստ էր, միայն թե կարողանար ազատվել իր համար մեծ բեռ դարձած Հայկական հարցից: Մեծ տերությունների խուսանավող քաղաքականությունը և նրանց միջև հակասությունները հնարավորություն են տալիս օսմանյան վարչակարգին իրագործելու իր դիվային ծրագիրը: Ջարդարարների անպատժելիությունը հետագայում հիմք դարձավ 1915 թ. ցեղասպանությունն իրագործելու համար:

Ստորև բերված է Սասունի ավերված գյուղերի ցուցակը: Ցավոք, «Մուրճ» ամսագրում չի տրված նման տեղեկություն մյուս շրջանների մասին:

---

[25] **Թառոյան Կ. Զ.,** *Արևմտահայերի ազատագրական պայքարը XIX դարի վերջին և XX դարի սկիզբին, Ե., 1980 թ., էջ 169:*

« ՅՈՒՑԱԿ»

Սասունի աւերուած գիւղերի 1894 թ. (Արժանահաւատ աղբիւրից)[26]

Հ/հ	Գիւղերի անվանումը	Աւերված տների քանակը	Աւերված եկեղեցիների քանակը	Աւերված դպրոց-ների քանակը
1.	Ալիանցիք[27]	25		
2.	Ալոչիկ[28]	7		
3.	Դաշտոք[29]	12		
4.	Շէնրք գիւղ[30]	40	2	1
5.	Մզիէսորփ[31]	15		
6.	Դափէ[32]	10		
7.	Կլընկիման[33]	20		
8.	Պապճանց	8		
9.	Սէմալ գիւղ[34]	50	1	1
10.	Միւս Դաշտոք[35]	8		
11.	Պլոյարտէր[36]	10		
12.	Պոնկէ[37]	20		
13.	Կրոէհիսար[38]	10		
14.	Մերկիր[39]	8		
15.	Խոշոք[40]	12		
16.	Կէլիկուզան գիւղ[41]	80	1	1
17.	Կլիսան[42]	8		
18.	Հիւսենցիք[43]	30		
19.	Մխիթար[44]	15		
20.	Խարիպշան[45]	13		
21.	Խտան[46]	20		

[26] *Մուրճ, 1895, N 8, էջ 1554-1555:*

[27] *Գյուղ Սասունի Բուն Սասունի գավառում:*

[28] *Գյուղ Սասունի գավառի Գելիեզուզան շրջանում:*

[29] *Գյուղ Բիթլիս նահանգի Մուշ գավառում:*

[30] *Տե՛ս Շենիկ:*

[31] *Տե՛ս Մզբեսորի:*

[32] *Գյուղ Բիթլիս նահանգի Խութի շրջանում:*

[33] *Տե՛ս Գյալեզրանման կամ Փալիի գոմեր գյուղակ Բիթլիս նահանգի, Սասունում, Անդոկ լեռան հարավարևելյան փեշերին, Գելիեզուզան գյուղի մոտ: Վերջինիս թաղերից մեկը:*

[34] *Գյուղ Բիթլիս նահանգի Մուշ գավառում, բուն Սասունի գավառակում:*

[35] *Սեմալի թաղերից մեկը:*

[36] *Տե՛ս Պալոյի արտեր, Գելիեզուզանի «թաղերից»:*

[37] *Տե՛ս Բունգեղ, Գելիեզուզանի «թաղերից»:*

[38] *Գեռհասար Ալիանքի թաղ:*

[39] *Գյուղ Բիթլիս նահանգի Մուշ գավառում, Սասունի Տալվորիկ գավառակում, Տալվորիկ գավառից հյուսիս, Բոհտան գետի աջ կողմում, նրա մի վտակի ափին:*

[40] *Գյուղ Բիթլիս նահանգի Մուշ գավառում, Սասունի Գելիեզուզան գավառակում:*

[41] *Գյուղ Բիթլիս նահանգի Մուշ գավառի Շատախ գավառակում, տե՛ս Գելիեզուզան:*

[42] *Տե՛ս Գյալեսան, Գելիեզուզանի □թաղերից□:*

[43] *Գյուղ Բիթլիս նահանգի Սասունի Գելիեզուզան գավառակում: Հուսենցիք*

[44] *Գյուղ Բիթլիս նահանգի Սասունի Բուն Սասունի գավառում, Գելիեզուզան գավառի թաղերից մեկը:*

[45] *Գյուղ Բիթլիս նահանգի Մուշ գավառում, Սասունում:*

22.	Երկուաղբի[47]	60		
23.	Թխիկ[48]	7		
24.	Կրղէռոշ[49]	4		
25.	Հեթինք[50]	70	2	
26.	Նռնոց[51]	70	2	
27.	Դալտորիկ գիւղ[52]	60		
28.	Ձորեր[53]	15		
29.	Սպաղանք գիւղ[54]	50		
30.	Հարթք[55]	45		
31.	Հոսնուտ[56]	15		
32.	Փուրխ գիւղ[57]	50	1	
33.	Խրլհովիտ[58]	40		
34.	Տրւալինք[59]	40	1	
35.	Հրլօղինք[60]	50		
36.	Եղկարտ[61]	30		
37.	Մերկիր[62]	25		
38.	Հրրթխոյ[63]	35	1	
39.	Քորախոյ[64]	40		
40.	Հումանք[65]	15		
41.	Մրզրա[66]	35		

[46] Գյուղ Բիթլիս նահանգի Սասունի Շատախ (Ծովասար) գավառակում, Բաթման գետի վերին հոսանքի աջ կողմում, Անդոկ լեռնագագաթից դեպի Ծովասար իջնող ճանապարհին, Աղբի գյուղից արևմուտք:

[47] Աղբին է՝ իր Վերին և Ներքին թաղերով:

[48] Գյուղ Բիթլիս նահանգի Մուշ գավառում, Սասունի Բուն Սասունի գավառում, Ծովասար լեռան արևմտյան փեշերին:

[49] Տե՛ս Գյալարաշ, Գելառաշ, Գյուղ Բիթլիս նահանգի Մուշ գավառի Սասունի գավառակում:

[50] Գյուղ Բիթլիս նահանգի Սասունի Ծովասար գավառակում:

[51] Տե՛ս Նռնա, գյուղ Բիթլիս նահանգի Մուշ գավառի Բուն Սասունի գավառակում:

[52] Տե՛ս Տալվորիկ:

[53] Տալվորիկի ձորեր:

[54] Գյուղ Բիթլիս նահանգում, Սասունի Բուն Սասունի գավառում, տե՛ս Սպղանք:

[55] Գյուղ Բիթլիս նահանգի Սասունի Տարոն գավառակում:

[56] Գյուղ Բիթլիս նահանգում, Սասունի Տալվորիկ գավառակում, Տալվորիկ գյուղից մոտ 7 կմ արևելք, Բաթման գետի աջ ափին:

[57] Գյուղ Բիթլիս նահանգի, Մուշ գավառում, Սասունի Տալվորիկ գավառակում Տալվորիկ ձորի արևելյան լանջին:

[58] Գյուղ (թաղ) Արմ. Հայաստանում, Բիթլիս նահանգի, Մուշ գավառում, Սասունի Տալվորիկ գավառակում Տալվորիկից հարավ-արևելք, Բաթման գետի ձախ կողմում:

[59] Գյուղ Բիթլիս նահանգի, Մուշ գավառում, Սասունի Տալվորիկ գավառակում, տե՛ս Դվալենք:

[60] Գյուղ Բիթլիս նահանգում Սասունի Տալվորիկ գավառակում, համանուն գետակի վրա:

[61] Գյուղ Բիթլիս նահանգում Սասունի Տալվորիկ գավառակում: Տե՛ս Եղգարդ:

[62] Գյուղ Բիթլիս նահանգի, Գենջի գավառում, Սասունի բուն Սասուն գավառակում Գելիեգուզան գյուղի մոտ:

[63] Գյուղ Բիթլիս նահանգի, Սասունի Տարոն գավառակում: Տե՛ս Արթխ. Արտխոնք:

[64] Գյուղ Բիթլիս նահանգում Սասունի Բուն Սասունի գավառում, Մուշ քաղաքից 38 կմ հարավ:

[65] Գյուղ Բիթլիս նահանգում Բուն Սասունի գավառակում, Տալվորիկի գավառախմբում, Տալվորիկի «թաղ»գյուղերը: Տե՛ս Հազմանք:

42.	Իշխանձոր[67]	40	1	1
43.	Խրզրկու արտեր[68]	45		
44.	Սևիթ[69]	65	1	
45.	Կռանոս[70]	65	1	
46.	Ընկուզնակ[71]	50	1	
47.	Խաչուկներ[72]	20		
48.	Արտկոնք[73]	40		

СТАТЬИ ОБ АРМЯНСКИХ ПОГРОМАХ 1890-ЫХ ГОДОВ НА СТРАНИЦАХ ЖУРНАЛА “МУРЧ”

КОСЯН Л. С.

Резюме

На страницах журнала “Мурч” было издано множество материалов, посвященных армянским погромам 1890-ых гг. Опубликованные в “Мурче” фактические материалы являют собой огромную ценность, поскольку они воссоздают объективную картину потерь армянского населения, в частности, Харбердской губернии и 59 деревень.

THE COVERAGE OF 1890s ARMENIAN MASSACRES IN “MURCH”

L. QOSYAN

Abstract

Armenian periodicals comprise a lot of documents and materials about the Armenian massacres. “Murch” magazine, initiated by Avetis Araskhanyan in Tiflis, covered Sasoun massacres, the ensuing peaceful protests and barbaric acts during those demonstrations, the reaction of European countries, May reforms and the massacres that started in 1895. There is also detailed information about the Armenian massacres in Kharberd region and its 59 villages (1 October,1895 – 15 January, 1896). The appendix of the article comprises the list of destroyed villages in Sasoun.

---

[66] *Գյուղ Բիթլիս նահանգի, Բիթլիսի գավառում, Խիզանի գավառակի Էրունի շրջանում: Տե՛ս Մզրոն:*

[67] *Գյուղ Բիթլիս նահանգում, Սասունի Խիանք գավառակում, տե՛ս Իշխանաձոր:*

[68] *Իշխանձորի «թաղերից»*

[69] *Գյուղ Բիթլիս նահանգում Սասունի Խիանք գավառակում:*

[70] *Իշխանձորի «թաղերից»:*

[71] *Գյուղ Բիթլիս նահանգում Սասունի Խութ Բռնաշեն գավառակում, տե՛ս Ընկուզէք:*

[72] *Գյուղ Բիթլիս նահանգի, Մուշ գավառի Մերքեզ գավառակում, տե՛ս Խսլնոց:*

[73] *Գյուղ Բիթլիս նահանգում, Սասունի Խիանք գավառակում, նրա հյուսիսարևելյան մասում, տե՛ս Արտխոնք:*